

Յովիտ

Վարչական ղեկավար՝ Ավետիք Սերոպյան

Հեռ 094679763

Մակերես՝ 16.4կմ²

Բնակչություն՝ 510

hovit.shirak@mta.gov.am

Համայնքի ներկայիս անվանումը – ՀՈՎԻՏ

Համայնքի պատմական անվանումները- Փոքր Քյափանակ

Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը – 1828-1829թթ,

Որ համայնքներին է սահմանակից համայնքը – Կառնուտ, Բասեն, Ջրառատ, Լոռվա մարզ գ
Հարթագյուղ

Համայնքի մակերեսը – 1642,00հա

Հեռավորությունը մայրաքաղաքից- 130 կմ

Հեռավորությունը մարզկենտրոնից – 12 կմ

Բնակչության կազմը –հայեր,ռուս

Համայնքի նշանավոր մարդիկ – Թորգոմ Հարությունյան՝ «Ավանգարդ» թերթի խմբագիր,Վաչագան
Հարությունյան՝ բանաստեղծ

Կրթական հաստատություններ – դպրոց,գրադարան

Մշակութային հաստատություններ - ակումբ

Բնակչության հիմնական զբաղմունքը – անասնապահություն,հողագործություն

Հոգևոր կառույցներ – սբ. Աստվածածին եկեղեցի, մատուռներ

Գյուղ Գյումրու տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 13կմ հեռավորության վրա:

Նախկինում ունեցել է Հանքաշեն, Քյափանակ Փոքր անվանումները: Հովիտ է վերանվանվել 1945 թ-ին:

Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Գյուղը գտնվում է Փամբակի

լեռնաշղթայի արևմտյան լանջին, բլրապատ հարթավայրում՝ ծովի մակարդակից 1670մ բարձրության

վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են

ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար

խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային

լեռնատափաստաններ են: Շրջակայքում կան բազալտի, տուֆի, պեմզայի պաշարներ, որոնք ունն

արդյունաբերական նշանակություն: Գյուղում եղել են մասնակի ավերվածություններ 1988 թ-ի

դեկտեմբերի 7-ի երկրաշարժից: Գյուղից 2կմ հեռավորության վրա հայտնաբերվել են գյուղատեղի,

խաչքարեր: Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Բասենի շրջանից,

Կարսի մարզից 1829-1830թթ: 1831 թ-ին գյուղն ունեցել է 101, 1897 թ-ին՝ 608, 1926 թ-ին՝ 504, 1939 թ-ին՝

578, 1959 թ-ին՝ 543, 1970 թ-ին՝ 538, 1979 թ-ին՝ 492 հայ բնակիչ: Հնում այստեղ բնակվել են նաև հույներ:

Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ

ունեցել է 510 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 49%, կանայք՝ 51%: Տարիքային

խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 28%, աշխատունակներ՝ 52%, հետաշխատունակներ՝ 20%: Ունի 111 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 360հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես արոտավայրեր՝ կազմելով 833հա: Անտառային հողերը զբաղեցնում են 145հա: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Հովիտ
Ինդեքս՝ 2619